

### 5.13. Ագրոօդերևութաբաղադրական տեղեկատվություն (2002թ. մարտ - հունիս)

2002թ. գարունը բնութագրվեց վաղաժամկետությամբ: Աշնանացանի վեգետացիայի վերսկսման պահին հանրապետությունում հողի արդյունավետ խոնավության գարնանային պաշարները բավարար էին: Սակայն մարտ ամսին օդի միջին հանրապետական ջերմաստիճանը 3-4 աստիճանով բարձր էր նորմայից:

Հանրապետության որոշ տարածքներում (Արարատյան հարթավայր, դրա նախալեռները, Վայոց ձոր) մարտ ամսին 9-13 օր շուտ դիտվեց պտղատու ծառերի ուռչումը, երկրորդ տասնօրյակի վերջում սկսեց նաև ծիրանիների ծաղկումը: Սակայն մարտ ամսում տեղի ունեցավ նաև ցրտահարություն (-4...8<sup>0</sup>), որն իր բացասական ազդեցությունը թողեց բազմամյա տնկարկների վրա: Մարտ և ապրիլ ամիսներին դիտված հաճախակի տեղումները պտղատուների փոշոտման շրջանում (մարտին 21 օր , ապրիլին 27 օր) խանգարեցին փոշոտմանը: Ընդ որում, ապրիլ ամսվա միջին ջերմաստիճանը 1- 3<sup>0</sup> ցածր էր նորմայից: Արարատյան հովտում և Տավուշում պտղատուներին նշանակալի վնաս հասցրեցին ապրիլի երկրորդ տասնօրյակում դիտված ցրտահարությունը (-1...-5<sup>0</sup>) և տեղացած կարկուտը:

Տևական տեղումները բացասաբար ազդեցին նաև գարնանացանի ընթացքի վրա, ի մասնավորի՝ 2002թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել էր 33.8 հազ. հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք 2001թ. նույն ժամանակաշրջանի 81.7 հազ. հեկտարի դիմաց:

Մայիս-հունիս ամիսներին հանրապետության շատ շրջաններում հաճախակի դիտված հորդառատ անձրևները և կարկուտը մեծ վնասներ հասցրեցին գյուղատնտեսական մշակաբույսերին: Մայիս ամսվա տեղումների քանակը կազմեց նորմայի մոտավորապես 104%-ը, հունիսինը՝ 116%-ը: Մայիսին դիտված ջերմաստիճանները 1-2<sup>0</sup> –ով ցածր էին նորմայից, իսկ հունիսին՝ նորմային մոտ: Մայիսի 6-ին, 13-ին, 20-ին և 28-ին հանրապետության հյուսիսում և հարավում դիտվել են առավել վտանգավոր երևույթներ (հորդառատ անձրև և կարկուտ) և նույնը շարունակվել է նաև հունիսին: Հունիսի 1-ին, 19-ին, 30-ին Տաշիրում, Գյումրիում, Աշոցքում և Ամասիայում դիտվել են հորդառատ անձրևներ և կարկուտ:

2002թ-ի առաջին կիսամյակում դիտված բնական աղետները (ցրտահարություն, կարկուտ, հաճախակի և հորդառատ անձրևներ, ուժեղ քամի) մեծ վնասներ հասցրեցին գյուղատնտեսությանը, հատկապես պտղատու այգիներին: